ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՄԱՆ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻՆ ԱՆՁՆԱԿԱՆ ԽՈՒԶԱՐԿՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԴԵՊՔԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

04.05.2020 15:54

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ, նաև՝ Պալատ)** փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը **(այսուհետ՝ Հանձնաժողով)**, մասնակցությամբ՝ համակարգող Գևորգ Մկրտչյանի, անդամներ՝ Արմինե Ֆանյանի, Դիանա Շախրամանյանի, Էմին Բեգլարյանի, Ռոման Ահարոնյանի, Արսեն Մկրտչյանի և ներկայությամբ՝ փաստաբան Արման Արզումանյանի, ուսումնասիրելով վերջինիս կողմից ներկայացված դիմումը և տեսանյութը, ինչպես նաև լսեց նիստի ընթացքում տրված բանավոր բացատրությունները՝ իրեն ՀՀ ոստիկանության Նոր-Նորքի բաժնում **(այսուհետ՝ Բաժին)** 24.04.2020թ. անձնական խուզարկության ենթարկելու փաստի վերաբերյալ, արձանագրել է, որ.

1) հետաքննության մարմինը, տվյալ դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմին չի հանդիսացել,

2) առերևույթ բացակայել է անձին բերման ենթարկելու մասին որոշումը, քանի որ այն չի ներկայացվել փաստաբանին, ինչպես նաև վերջինիս վստահորդին,

3) բացակայել է նաև քրեական վարույթն իրականացնող մարմնի՝ քննիչի հանձնարարությունը, իր վարույթում քննվող քրեական գործով իրականացնել բերման ենթարկելու որոշման պահանջը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետ),

4) փաստաբան Արման Արզումանյանի վստահորդը Բաժին է բերման ենթարկվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի պահանջների խախտմամբ,

5) փաստաբան Արման Արզումանյանն անձնական խուզարկության է ենթարկվել «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ Օրենք)** 21-րդ հոդվածի երաշխիքների խախտմամբ՝ իր մասնագիտական պարտականություններն անմիջականորեն կատարելիս, երբ փորձել է կանխել իր վստահորդի իրավունքների առերևույթ խախտումները,

6) փաստաբան Արման Արզումանյանը կանգնած է քրեական հետապնդման ենթարկվելու վտանգի առաջ՝ իր մասնագիտական պարտականությունների կատարման կապակցությամբ, ինչի արգելքն ուղղակիորեն նախատեսված է Օրենքի 21-րդ հոդվածով,

7) փաստաբան Արման Արզումանյանին անձնական խուզարկության ենթարկելը չի հետապնդել իրավաչափ նպատակ և ուղղված չի եղել բացառապես վերջինիս վստահորդի բջջային հեռախոսը վերցնելուն, քանի որ, անգամ դրա տեղը մատնանշելուց և ոստիկանների կողմից այն վերցնելուց հետո, փաստաբանի անձնական խուզարկությունը շարունակվել է, որի արդյունքում վերջինիս գրպանից հանվել է նաև նրա անձնական բջջայինը, ստուգվել է գրպանների ամբողջ պարունակությունը,

8) հաշվի առնելով այն հանգամանքը, որ խոչընդոտել հնարավոր է միայն քրեական հետապնդման մարմնի օրինական գործունեությանը՝ փաստաբան Արման Արզումանյանի արարքը չի կարող պարունակել ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածով նախատեսված հանցակազմ:

Հանձնաժողովը, վկայակոչելով նաև համապատասխան իրավակարգավորումները հանդես է եկել հետևյալ հայտարարությամբ.

- ***ՀՀ փաստաբանների պալատի փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովն***

անթույլատրելի է համարում փաստաբանական գործունեության օրենսդրական երաշխիքների ցանկացած սահմանափակում և խստորեն դատապարտում ՀՀ ոստիկանության Նոր-Նորքի բաժնում ոստիկանների կողմից, իր մասնագիտական պարտականություններն անմիջականորեն իրականացնելիս փաստաբան Արման Արզումանյանին անձնական խուզարկության ենթարկելը:

- ՀՀ փաստաբանների պալատի փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը խստորեն դատապարտում է փաստաբան Արման Արզումանյանի նկատմամբ իր մասնագիտական պարտականությունների կատարման կապակցությամբ քրեական հետապնդում հարուցելու ցանկացած նախաձեռնություն և քրեական հետապնդման մարմիններին հորդորում է զերծ մնալ փաստաբանական գործունեությանը որևէ կերպ ապօրինի միջամտելուց:

Բեռնել՝ Հանձնաժողովի հայտարարությունը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի

փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողով

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })